ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՀԱՀՀ-19

քաղ. Երևան *«12» «02» 2016 թվական*

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Շնորհատու», մի կողմից և «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Շնորհառու», մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայություններ իրականացնելու նպատակով Շնորհառուին հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 135239500 (հարյուր երեսունհինգ միլիոն երկու հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Շնորհառուն պարտավորվում է, ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Շնորհատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1. կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Շնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Շնորհատուն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման կամ տեղական ինքնակառարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Շնորհառուն պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով,

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին՝

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունը (հավելված N 2)՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ եռամսյակային հաշվետվության հետ միաժամանակ (հավելված N 4), իսկ ծրագրի ավարտից հետո ամփոփ հաշվետվություն:

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ ամսական հաշվետվությունը՝ մինչև հաջորդող ամսվա 10-ը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ, կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին որպես դրամաշնորհ վճարել 135239500 ((հարյուր երեսունհինգ միլիոն երկու հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածի համապատասխան: Ծրագրի գնից 11000000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին, որպես կանխավճար:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ՝ համաձայն N 4 հավելվածի, Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվությունն ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար վճարում է Շնորհառուին հաշվետվությունն ընդունելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Եռամսյակի ավարտից հետո Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N 2 հավելվածով ներկայացված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշներին համապատասխան՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարատավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շինորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և փոխանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե

անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, 9 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ք. Երևան, Կառավարական շենք N 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900011008621	«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ ք. Երևան, Մամիկոնյանց 39ա «Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մ/ճ հ/հ 163058800554 հվհհ 00422412
Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	Ա. ԱՎԱԳՅԱՆ
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
2016 թ. 02 12-ին
կնքված N ԱԱՀ - 19 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա ժամկետը	Պահանջվող գումարը (հազ.դրամ)
1.	Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում	Ծրագրի նպատակն է՝ 1. Բույսերի վնասակար օրգանիզմների հետազոտություններ, բույսերի պաշտպանություն ու մասնագիտական աջակցություն, 2.Կանխարգելիչ միջոցառումների, պատվաստված անասնագլխաքանակի, կայուն ֆոնի ապահովումը: ՀՀ 2016թ պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհը պայմանավորված է պետության կողմից <<Անասնաբուժասանիտարայի և բուսասանիտա-րիայի ծառայություն-ների կենտրոն>> ՊՈԱԿ-ին իր կանոնադրա-կան խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:	Ծրագրվում է իրականացնել հետևյալ միջոցառումները. 1. Հետազոտությունների միջոցով հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների տարածման արեալի և վնասակարության շեմերի ճշտում ու մասնագիտական աջակցություն: 2. Պատվաստանյութերի բաշխում, անասնաբույժերի աշխատանքների համակարգում, հաշվետությունների ընդունում և վերլուծություն, վերլուծության հիման վրա հակահամաճարակային իրավիճակի գնահատում, կարանտինային միջոցառումների իրականացում:	Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ունենալ վնասակար օրգանիզմներով վարակվածության ճշտված արեալ, հանրապետության կայուն բուսասանիտարական վիճակի բարձրացված մակարդակ, բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման, կանխատեսման համար մոնիտորինգի ենթարկված գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, ինչպես նաև կայուն անասնահամաճարակային վիճակ: Գնահատման չափանիշներն են՝ 1. Հանրապետությունում վնասակար օրգանիզմներով վարակվածության արեալի ճշտում գյուղատնտեսական նշանակության հողատարածություններում կատարված դիտարկումներ (մոնիթորինգ): 2. Ծրագրի իրականացման արդյունքի ցուցանիշներն են համարվում հանրապետությունում կենդանիների ինֆեկցոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակիապահովումը, կենդանիների և	30.12.2016թ.	135239.5

				մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությունը:		
ԸՆԴԱՄԵՆԸ						135239.5

ՇՆՈՐՀԱՏՈՒ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք N 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008621

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կ.Տ

ՇՆՈՐՀԱՌՈՒ

«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի
ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մ/ճ
հ/հ163058800554

Ա. ԱՎԱԳՅԱՆ

Կ.Տ

Հավելված N 2
2016 թվականի 02 12 -ին կնքված
պայմանագրի N ԱԱՄ-19

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Ծրագրերի անվանումը՝ *Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում*

Նկարագրությունը	Միջոցառման անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2016 թվականի ընթացքում			
		I եռամսյակ	I կիսամսյակ	Ինն ամիս	Տարի
Դաշտային հետազոտությունների միջոցով հանրապետությունում բույսերի առավել վնասակար և գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում ու նոր օջախների հայտնաբերում, անասնաբուժական միջոցառումների հաշվետվությունների ընդունում , ամփոփում, պատվաստանյութերի բաշխում մարզերին և ախտահանության աշխատանքներ	Հետազոտված տարածքներ, հա	46 000,0	136 000,0	223 000,0	251 650
	Անասնաբուժական միջոցառումների կազմակերպում,հա մայնքների քանակը	915	915	915	915

ՇՆՈՐՀԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք N 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
h/h 900011008621

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Կ.Տ.

ՇՆՈՐՀԱՌՈՒ
«Անասնաբուժասանիտարիայի և
բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մ/ճ
h/h 163058800554

Ա. ԱՎԱԳՅԱՆ
Կ.Տ.

Հավելված N 3

2016 թվականի 02 12 -ին կնքված

պայմանագրի N ԱԱՀ-19

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

3 Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախ
04	*02*	*01*	*08*	*104007*

4. Գանձապետական բյուջետային հաշվի համար 900011008621

Ծրագրերի անվանումը՝ ***Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում***

/ հազար. դրամ/

Ձեռք բերվող ծառայությունների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման համարը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեից, ընդ որում											
			I եռամսյակ			I կիսամսյակ			Ինն ամիս			Տարի		
			հունվ.	փետր.	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմբ.	դեկտեմ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Անասնաբուժասանիտա-րիայի և բուսասանիտարիայի ծառայություններ	4637	135 239,5		11 000,0	22 585,0	33 000,0	44 000,0	56 394,9	69 000,0	80 000,0	90 204,8	104 000,0	119 000,0	135 239,5

ՇՆՈՐՀԱՏՈՒ
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք N 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008621

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Կ.Տ.

ՇՆՈՐՀԱՌՈՒ
«Անասնաբուժասանիտարիայի և
բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մ/ճ
հ/հ 163058800554

Ա. ԱՎԱԳՅԱՆ

Կ.Տ.

2016 թվականի 02.12 կնքված
N ԱԱՄ-19 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
__.__.2016թ. - __.__.2016թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ **« Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն »** ՊՈԱԿ
2. Փոստային հասցեն՝ _____
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը՝ **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**
5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ 1
(ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)
6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
Բաժին N O4
Խումբ N O2
Դաս N O1
7. Ծրագրի կոդը 08
8. Ծրագրի անվանումը՝ **Անասնաբուժասանիտարիայի սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում**
9. Հիմնարկի կամ պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 104007
10. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի		Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում			Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)		Դրա-մարկղի մնացորդ
	անվանումները	NN		ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադաս կողմից					Ընդամենը	Որոնցից 30 օրից անց պարտքեր	
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Դ+Ե+Զ+Է	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ
1100000	*Ընթացիկ ծախսեր,*	x	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
	այդ թվում՝												
1150000	*5.Դրամաշնորհներ*	x	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637											
1000000	*Ընդամենը ծախսեր*	x	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0

«____» _____2016թ.

«_____» տնօրեն՝ Ա. Ավագյան

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ՝ Կ. Ավետիսյան

Հաշվապահ՝ Ա.Ավանեսյան

Անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ՝ Թ. Ստեփանյան